



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ԼԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N. Y. 10016 • 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Քիւ 28906
Փետրուար 28, 1973

Հոգեշնորհ
Տ. Արշէն Կրդ. Այվազեան
Հովիւ Ս. Սալ Շկեղեցւոյ
Նախագահ ժխական Խորհուրդի
Նիւ Շորք.

Սիրելի Հայր Արշէն,

Ստացած ենք 1973 Փետրուար 22 թուակիր Ձեր տեղեկագիրը, որով կը
հաղորդէք թէ Ձեր նախագահութեամբ Փետրուար 4ին գումարուած համայն-
քիղ ժխական ժողովին մէջ կատարուած է ժխական Խորհուրդի վեց անդամոց
ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը խնդրէք
ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր ժխական ժողովը տեղի ունեցած է Թեմական
Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք
ժխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Համեցէք փութով Առաջնորդարան ղրկել ժխական Խորհուրդի նորընտիր
Դիւանի անդամոց եւ եկեղեցւոյդ ենթակայ մարմիններու վարչութեանց
ատենապետներու անունը, հասցէն եւ հեռաձայնի թիւը, ինչպէս նաեւ
նոր պատգամաւորներու հասցէները:

Օրհնելով ժխական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ Ձեր
պաշտօնակիցներուն յաջող եւրարդիւնաւոր գործունէութեան սարի մը, ի
պայծառութիւն Ս. Շկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր
սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունել

ԹՈՐԿՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

| | |
|------------------|----|
| Դաւիթ Դաւիթեան | 89 |
| Թորոս Միքայէլեան | 85 |
| Զաւէն Տէմիրճեան | 82 |
| Ժէք Խաչիկեան | 80 |
| Նորայր Պետրոսեան | 57 |
| Զուարթ Պօղոսեան | 55 |